Liberté • Égalité • Fraternité

RÉPUBLIQUE FRANÇAISE

MINISTÈRE DE L'INTÉRIEUR

Direction générale des étrangers en France



# Ուղեցույց ապաստան հայցողի համար

ուԱՐ նոյեմբեր 2015

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ


1. 1. Պաշտպանության տարբեր տեսակները ....................................... 4

**1.1. Փախստականի կարգավիճակ** ....................................... **4**

**1.2. Օժանդակ պաշտպանություն** ....................................... **4**

**1.3. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ** ....................................... **5**

2. Հասանելիություն տարածքում կեցության իրավունքին ու ընթացակարգին ....................................... 7

**2.1. Ձեր ապաստանի հայցի քննության պատասխանատու Պետության ճշտորոշումը** ....................................... **7**

**2.2. Ֆրանսիայի տարածքում կեցության իրավունք** ....................................... **8**

3. Ապաստանի հայցի քննման պայմանները ....................................... 10

**3.1. Քննումը Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության գրասենյակի կողմից (OFPRA)** ....................................... **10**

- OFPRA-ի ձևաթղթի լրացումը ....................................... 10
- Գործի ուղարկումը ....................................... 10
- OFPRA-ի կողմից հայցի գրանցման ապացույցը ....................................... 11
- Հայցի քննումը նորմալ ընթացակարգով կամ արագացված ընթացակարգով ....................................... 11
- Հարցազրույցը l'OFPRA-ում ....................................... 12
- OFPRA-ի որոշումը ....................................... 13

**3.2. Քննումը Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանի կողմից(CNDA)** ....................................... **13**

- Բողոքարկման ժամկետը ....................................... 14
- Բողոքարկումը ....................................... 14
- Բողոքարկման ընդունման անդորրագիրը ....................................... 15
- Փաստաբանի օգնությունը ....................................... 15
- Լսումը CNDA-ում ....................................... 16
- CNDA-ի որոշումը ....................................... 16

**3.3. Ապաստանի հայցի անընդունելիությունն ու փակումը** ....................................... **17**

- Անընդունելի հայց ....................................... 17
- Հայցի քննության փակումը ....................................... 17

**3.4. Վերաքննումը** ....................................... **18**

4. Ապաստան հայցողի ուղին ....................................... 20

**4.1. Ուղորդում ապաստան հայցողին** ....................................... **20**

- Առաջին ընդունումն ու կողմնորոշումը ....................................... 20
- Ընդունման նյութական պայմանները ....................................... 22
- Միակ դռնակի կողմից դյուրաբեկության հաշվի առնելը ....................................... 22

**4.2. Ապաստան հայցողի բնակեցումը** ....................................... **23**

■ Բնակեցման վայրերը ........ 23
■ Ուղորդում դեպի բնակեցում ........ 23
■ Մեկնումը բնակության վայրից ........ 24
5. Ապաստան հայցողների իրավունքները ........ 25
**5.1. Նպաստ ապաստան հայցողների համար (ADA) ........ 25**
■ Դրանից օգտվելու պայմանները ........ 25
■ Հայցի ձևակերպումը ........ 25
■ Նպաստի չափը ........ 26
■ Վճարումը ........ 26
■ Բողոքարկումը ........ 26
**5.2. Հասանելիություն կրթությանը ........ 27**
**5.3. Բուժօգնություն ........ 27**
■ Շտապ բուժօգնություն ........ 27
■ Համապարփակ բժշկական ապահովագրություն (CMU) ........ 28
**5.4. Հասանելիություն աշխատանքային շուկա ........ 28**
6. Ապաստանի հայցի մերժման հետնանքները բնակեցման իրավունքի վրա ........ 29
**6.1.OFPRA-ի կամ CNDA-ի մերժման որոշումը ........ 29**
**6.2. Օգնություն դեպի երկիր վերադառնալու համար ........ 29**
**6.3. Դեպի երկիր ստիպողական վերադարձ ........ 30**
7. Պաշտպանություն ստացած անձանց իրավունքները ........ 32
**7.1. Կեցությունը Ֆրանսիահում ........ 32**
**7.2. Ընտանիքի բնակեցումը ........ 33**
■ Ընտանիքի անդամների բնակեցումը ........ 33
■ Ընտանիքի վերամիավորման իրավունքը ........ 34
**7.3. Ինտեգրացողըմը ........ 35**
■ Ընդունման և ինտեգրացման պայմանագրի ստորագրումը Էմիգրացիայի ու Ինտեգրացիայի Ֆրանսիական Գրասենյակի հետ (OFII) ........ 35
**7.4. Սոցիալական իրավունքները ........ 36**
■ Բնակարանի հասանելիություն ........ 36
■ Հասանելիություն աշխատանքային շուկա ........ 36
■ Բուժօգնության հասանելիություն ........ 36
■ ԼՍոցիալական ու ընտանեկան նպաստներ ........ 37
**7.5. Ճանապարհորդություն դեպի արտասահման ........ 37**
**7.6. Նատուրալիզացիա (քաղաքացիության ստացում) ........ 38**
ՀԱՎԵԼՎԱԾ. Օգտակար հասցեներ ........ 39
**1. Հասցեներ ողջ տարածքի համար ........ 39**
■ Associations ........ 39
**2. Տեղային հասցեներ ........ 41**
■ Միակ դռնակներ ........ 41
■ Մարզպետարաններ ........ 42
■ Էմիգրացիայի ու Ինտեգրացիայի Ֆրանսիական Գրասենյակի տարածային Վարչություններ (OFII) ........ 44

# 1. 1. Պաշտպանության տարբեր տեսակները

Ֆրանսիայում գոյություն ունի պաշտպանության 3 տեսակ.՝ փախստականի կարգավիճակ, օժանդակ պաշտպանություն և քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ:

## 1.1. Փախստականի կարգավիճակ

Փախստականի կարգավիճակը կարող է Ձեզ շնորհվել 3 հիմքերի վրա.՝

-Համաձայն փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի հուլիսի 28-ին ընդունված **Ժնևյան Համաձայնագրի**: Փախստականի կարգավիճակ է շնորհվում

« ցանկացած անձի, ով (...) իր ցեղի, կրոնի, ազգության, սոցիալական մի որոշակի խմբին պատկանելու կամ իր քաղաքական գաղափարների պառճառով հիմնավորված վախ կրելու կապակցությամբ գտնվում է այն երկրից դուրս, որի քաղաքացին է և չի կարող կամ, այդ վախի պատճառով, անհոժար է օգտվել այդ երկրի պաշտպանությունից»,

- **սահմանադրական ապաստան** անվանման տակ գտնվող ապաստանի հիմքում ընկած է 1946 թվականի Սահմանադրության պարբերություն 4-ը: Փախստականի կարգավիճակ շնորհվում է «ցանկացած անձի, ով հետապնդվում է ի օգուտ ազատության կատարած իր գործունեության պատճառով »,

- **Միացյալ Ազգերի փախստականների հարցերով Բարձրագույն Հանձնախմբի (HCR) մանդատի համաձայն**, եթե Դուք փախստական եք ճանաչվել Փախստականների հարցերով Բարձրագույն Հանձնախմբի կողմից՝ իր կանոնադրության հոդված 6 և 7-ի հիմքով:

## 1.2. Օժանդակ պաշտպանություն

Օժանդակ պաշտպանություն է շնորհվում ցանկացած անձի, ով չի բավարարում փախստականի կարգավիճակ ստանալու պայմանները, բայց ում համար գոյություն ունեն լուրջ և ապացուցված պատճառներ կարծելու համար, որ նա իր երկրում ունի հետևյալ լուրջ վտանգներից մեկի իրական սպառնալիքը.՝

- մահապատիժ կամ անդատաստան վճռակատարում,
- խոշտանգում կամ, անմարդկային կամ ստորացուցիչ պատիժ կամ վերաբերմունք,
- ինչ վերաբերում է քաղաքացիական անձանց, լուրջ և անհատական սպառնալիք իր կյանքի կամ իր անձի հանդեպ մի բռնության պատճառով, որը կարող է տարածվել անձանց վրա՝ առանց հաշվի առնելու նրանց անձնական իրավիճակը, և որը ներքին կամ միջազգային ռազմական հակամարտության արդյունք է:

Ֆրանսիայում, փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն է շնորհում Փախստականների և Քաղաքացիություն չունեցող անձանց Պաշտպանության Ֆրանսիական Գրասենյակը (OFPRA)՝ Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանի (CNDA) վերահսկողության ներքո:

## 1.3. Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ

Համաձայն Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի վերաբերյալ 1954 թվ. Սեպտեմբերի 28-ի Նյու-Յորքի Համաձայնագրի, քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակ կարող է շնորհվել ցանկացած անձի «ով ոչ մի պետության կողմից չի ճանաչվում իր քաղաքացին՝ տվյալ երկրի օրենսդրության կիառմամբ»: Այս կարգավիճակը տարբերվում է պաշպանության մյուս երկու տեսակներից և վերաբերում է միայն այն անձանց, ովքեր քաղաքացիություն չունեն: Այն հաշվի չի առնում հետապնդման վտանգները:

Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակ է շնորհում Փախստականների և Քաղաքացիություն չունեցող անձանց Պաշտպանության Ֆրանսիական Գրասենյակը (OFPRA)՝ վարչական դատարանի վերհսկողության ներքո:

Ի տարբերություն քաղաքական ապաստան հայցողի, քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ստանալու համար դիմող օտարերկրացին չի օգտվում իր հայցի քննության ժամանակահատվածում ազգային տարածքի վրա գտնվելու իրավունքից :

Ուրեմն, Դուք չպետք է դիմեք Մարզպետարան, այլ ուղղակի գրավոր դիմեք Փախստականների և Քաղաքացիություն չունեցող անձանց Պաշտպանության Ֆրանսիական Գրասենյակ (OFPRA)՝ նշելով Ձեր անունները, ազգանունները, հասցեն, ինչպես նաև Ձեր հայցի պատճառները:

OFPRA-ն Ձեզ կուղարկի քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի հայցի ձնաթուղթ, որը Դուք պետք է լրացնեք և բացատրեք այն պատճառները, որոնք Ձեզ թույլ են տալիս կարծելու, որ Դուք ոչ մի Պետության քաղաքացիություն չեք կարող ստանալ: Դուք պետք է ստորգրեք ձնաթուղթն ու կցեք դրան 2 նոր լուսանկար և, ճանապարհորդության փաստաթուղթ, քաղաքացիական կացության փաստաթուղթ և ուժի մեջ գտնվող կեցության իրավունքի կրկնօրինակը վերջիններիս առկայությնան դեպքում:

Հարկավոր է ուղարկել ձնաթուղթը OFPRA փոստային ճանապարհով «ստացման անդորրագրով պատվիրված նամակով»:

Ձեզ կիրավիրեն OFPRA հարցազրույցի: Հակառակ քաղաքական ապաստան հայցողների, Դուք չեք կարող ներկայանալ փաստաբանի կամ որևէ մի կազմակերպության ներկայացուցչի ուղեկցությամբ:

Ձեզ կլսեն ձեր ընտրած լեզվով, բացի այն դեպքից եթե գոյություն ունի մի այլ լեզու, որը Դուք հասկանում եք ու որով Դուք կարող եք պարզ արտահայտվել:

OFPRA-ն Ձեզ կտեղեկացնի իր որոշման մասին փոստային ճանապարհով «ստացման անդորրագրով պատվիրված նամակով»:

- **Եթե** OFPRA-**Ն Ձեզ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ է շնորհում,** ապա Դուք կօգտվեք նույն իրավունքներից, ինչ պաշտպանություն ստացած մյուս անձինք ( տես 7. Պաշտպանություն ստացած անձանց իրավունքները), հատկապես կեցության իրավունքից, ճանապարհորդության թույլտվության իրավունքից ու ընտանեկան նորմալ կյանք վարելու իրավունքից:

- **Եթե** OFPRA-**Ն մերժում է Ձեզ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի շնորհումը,** ապա Դուք կարող եք բողոքարկել այդ որոշման դեմ Ձեր բնակության վայրի վարչական դատարանում՝ OFPRA-ի որոշման ծանուցման ամսաթվից 2 ամսվա ընթացքում:

Այս բողոքարկումը հետաձգող բնույթ չի կրում, ինչն էլ նշանակում է, որ Ձեզ կարող են հեռացնել ազգային տարածքից (Ֆրանսիայի տարածքը լքելու պարտականություն), որը կարող է ի կատար ածվել առանց սպասելու վարչական դատարանի որոշմանը:

# 2. Հասանելիություն տարածքում կեցության իրավունքին ու ընթացակարգին

Եթե Դուք ցանկանում եք ապաստան հայցել Ֆրանսիայում, ապա Դուք պետք է ապաստանի հայց ներկայացնեք Փախստականների և Քաղաքացիություն չունեցող անձանց Պաշտպանության Ֆրանսիական Գրասենյակ (OFPRA):

Դուք կարող եք ապաստան հայցել եթե Դուք ֆրանսիայում գտնվում եք օրինական իրավիճակում: Դուք կարող եք նմանապես ապաստան հայցել եթե Դուք գտնվում եք անօրիանական իրավիճակում կեցության իրավունքի տեսակետից կամ եթե Դուք Ֆրանսիա եք մուտք գործել անօրինական ճանապարհով:

Եթե Դուք ֆրանսիա եք մուտք գործել վիզայով, ապա Ձեզ համենայն դեպս խորհուրդ է տրվում հայցը ներկայացնել վիզայի ժամկետի ավարտից առաջ:

Ձեր ապաստանի հայցը OFPRA ներկայացնելու համար, դուք նախ և առաջ պետք է գրանցվեք Ձեր բնակության վայրի ապաստան հայցողների միակ դռնակում (տես 4. Ապաստան հայցողի ուղին):

Առաջին շրջանում, մարզպետարանի աշխատակիցը վավերացնում է միակ դռնակ ներկայացրած ողջ տեղեկությունները:

Երկրորդ շրջանում, Փախստականների և Քաղաքացիություն չունեցող անձանց Պաշտպանության Ֆրանսիական Գրասենյակի (OFPRA)-ի գործակալը գնահատում է Ձեր անհատական իրավիճակը:

Պայմանների բավարարման դեպքում, Ձեզ է տրվում ապաստանի հայցի մեկ ամսյա վավերություն ունեցող տեղեկանք, որը Ձեզ թույլ է տալիս մնալ Ֆրանսիայի տարածքում:

## 2.1. Ձեր ապաստանի հայցի քննության պատասխանատու Պետության ճշտորոշումը

Ճշտելու համար արդյո՞ք Ֆրանսիան է պատասխանատու Ձեր ապաստանի հայցի քննման համար, Ձեր գործի ներկայացման ժամանակ, մարզպետարանի գործակալը կվերցնի Ձեր 10 մատների մատնահետքերն ու անհատական հարցազրույց կվարի Ձեզ հետ՝ հատկապես պարզելու համար Ձեր երկրից դուրս գալուց հետո անցած ճանապարհը, և հաստատել այն հնարավոր, օրինակ ընտանեկան, կապերը, որոնք Դուք կարող եք ունենալ այլ անդամ Պետությունների հետ: Եվ հենց այս տարրերի ամբողջության հիման վրա կճշտվի ապաստանի Ձեր հայցի քննող պատասխանատու երկիրը՝ ի կիրառումն սովորաբար Դուբլին III անվամբ գործող 2013 թ. Հունիսի 26-ին Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի թիվ 604/2013 կանոնակարգի:

**Դուբլին III-ին հարող Պետությունները**

Խոսքը գնում է Եվրոպական Միության 28 անդամների և 4 համագործակից երկրների մասին՝ Գերմանիա, Ավստրիա, Բելգիա, Խորվաթիա, Կիպրոս, Դանիա*, Իսպանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լիտվա, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Մալտա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Չեխիայի Հանրապետություն, Ռումինիա, Միացյալ Թագավորություն, Սլովակիա, Սլովենիա, Շվեդիա, բայց նաև որպես համագործակից երկրներ՝ Իսլանդիա, Նորվեգիա, Շվեյցարիան և Լիխշտեյնշտեյնը:

*Դանիան չի ենթարկվում «Դուբլին III»-ին, բայց շարունակում է կիրառել 1990 թ. Հունիսի 15-ին ստորագրած Դուբլինի համաձայնագիրը:

Փաստորեն, հնարավոր է, որ Ֆրանսիայից բացի մի այլ եվրոպական Պետություն հանդիսանա ապաստանի Ձեր հայցի քննման պատասխանատուն, օրինակ.՝

- Եթե անդամ մի Պետություն Ձեզ շնորհել է կեցության թույլտվություն կամ վիզա, որը դեռ ուժի մեջ է,
- եթե հաստատվել է, որ Դուք անդամ այլ Պետության արտաքին սահմանը ցամաքով, օդով կամ ծովով անցել եք անօրինական կերպով,
- Եթե Դուք եվրոպական Միության տարածք եք մուտք գործել անցնելով առաջինը մի անդամ Պետության սահմանները, ուր Դուք վիզայի կարիք չունեիք,
- Եթե Դուք ապաստան եք հայցել մի այլ անդամ Պետությունում:

**Գործընթացի իրականացումը անդամ Պետության կողմից**. Եթե Ֆրանսիայից բացի մի այլ անդամ Պետություն է պատասխանատու ապաստանի Ձեր հայցը քննելու համար, ապա մարզպետարանը կկապվի այդ Պետության հետ՝ խնդրելու համար զբաղվել ապաստանի Ձեր հայցի քննմամբ:

Այդ դեպքում, Ձեզ կտրվի ապաստանի հայցի ներկայացման տեղեկանք, որը Ձեզ թույլ է տալիս մնալ ֆրանսիայի տարածքում մինչև Ձեր փոխանցումը դեպի այդ պետություն, որը կճանաչի իր պատասխանատվությունը:

Այդ փոխանցումը կկազմակերպվի մարզպետարանի ծառայությունների կողմից, որոնք Ձեզ կծանուցեն փոխանցման մի որոշում՝ ընդգծելով Ձեր մեկնման ձևերը: Ձեզ 15 օր ժամանակ է տրվում բողոքարկելու համար այդ որոշման դեմ վարչական դատարանում:

**Գործընթացի իրականացումը Ֆրանսիայի կողմից**. Այն դեպքում, երբ Դուբլինյան գործընթացը կհաստատի, որ Ֆրանսիան է ճանաչվում պատասխանատու երկիր ապաստանի Ձեր հայցը քննելու համար, ապա գործընթացը կընթանա այսուհետ նկարագրած պայմաններում (տես 2.2):

## 2.2. Ֆրանսիայի տարածքում կեցության իրավունք

Այն դեպքում, երբ ապաստանի Ձեր հայցի քննումը ընկնում է Ֆրանսիայի պատասխանատվության տակ, ապա Ձեզ տրվում է մեկ ամիս ուժի մեջ գտնվող ապաստանի հայցի առաջին տեղեկանքը: Մարզպետարանը կարող է մերժել ապաստանի հայցի տեղեկանք տալը հետևյալ սեպքերում.՝

- Դուք ներկայացնում եք վերաքննության մի նոր հայց (տես 3.4),
- Ձեր դեմ գոյություն ունի Ձեր երկրից բացի դեպի մի այլ երկիր օտարման վերջնական որոշում, կամ եվրոպական ձերբակալման հրամանի հիման վրա հանձնման որոշում, կամ միջազգային քրեական դատարանի կողմից հանձնման դիմում:

Այդ մեկ ամսվա ընթացքում, 21 օրվա ժամանակահատվածում OFPRA հանձնեք կամ ուղարկեք ապաստանի հայցի ձևաթուղթը (տես 3. Ապաստանի հայցը քննելու պայմանները):

Եթե Ձեր գործն ամբողջական է, OFPRA-ն նամակով հաստատում է դրա ստացումը: Դուք պետք է ներկայացնեք այդ մանակը Ձեր բնակության վայրի մարզպետարան՝ ստանալու համար ապաստանի հայցի տեղեկանքի ժամկետի երկարացումը:

Տեղականքի ժամկետը երկարացվում է ապաստանի Ձեր հայցի քննման ողջ ժամանակահատվածում՝ մինչն OFPRA -ի որոշման, և բողոքարկման դեպքում CNDA-ի որոշման ծանուցումը՝ բողոքարկման ընդունման ստացման ներկայացման դեպքում (տես 3.2 Քննումը Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանի կողմից)՝ մինչև իր որոշման ծանուցումը:

Ժամկետի երկարացման յուրաքանչյուր դիմումի հետ, Ձեր դիմումը հիմնավորելու համար, Դուք պետք է ներկայացնեք մարզպետարանի կողմից խնդրած փաստաթղթերը, հատկապես Ձեր բնակության վայրն ապացուցող փաստը, կամ Ձեզ հասցե տվող համաձայնագրված կազմակերպության հասցեի նշումը:

Ժամկետի առաջին երկարացման ժամանակ, երկրորդ տեղեկանքն ուժի մեջ է 9 ամիս նորմալ ընթացակարգի և 6 ամիս՝ արագացված ընթացակարգի դեպքում:

Ժամկետի հաջորդ երկարացման ժամանակ, տեղեկանքն ուժի մեջ է 6 ամիս նորմալ ընթացակարգի և 3 ամիս՝ արագացված ընթացակարգի դեպքում:

Եթե Եվրոպական միության մի այլ երկիր է պատասխանատու ապաստանի Ձեր հայցի քննման համար, ու եթե Դուբլինի ընթացակարգը ի կատար է ածվել, ապա առաջին տեղեկանքի ժամկետը մեկ ամիս է: Այն կարող է երկարացվել 4 ամիս ժամկետով (տես 2.1 Ձեր ապաստանի հայցի քննության պատասխանատու Պետության ճշտորոշումը):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.՝ Ապաստանի հայցի տեղեկանքը Ձեզ թույլ չի տալիս ազատ երթևեկել Եվրոպական միության մյուս երկրներում:

Մարզպետարանը կարող է ետ վերցնել կամ մերժել ապաստանի հայցի Ձեր տեղեկանքը հետևյալ դեպքերում.՝

- OFPRA-ն ապաստանի Ձեր հայցը հայտարարել է անընդունելի (տես 3.3 Անընդունելիություն և փակում),
- Դուք տեղեկացրել եք OFPRA -ին, որ ետ եք վերցնում ապաստանի Ձեր հայցը (տես 3.3 Անընդունելիություն և փակում),
- OFPRA-ն փակման որոշում է կայացրել ու Դուք չեք դիմել Ձեր գործի վերանայման համար (տես 3.3),
- Դուք վերաքննման հայց եք ներկայացրել, որի միակ նպատակը օտարման որոշումը անհաջողության հասցնելն է, որի համար անընդունելիության որոշում է կայացվել (տես 3.4 Վերաքննում),
- Դուք ներկայացնում եք վերաքննման նոր հայց (տես 3.4),
- Ձեր հանդեպ վերջնական որոշում է կայացվել օտարել Ձեզ Ձեր երկրից բացի դեպի մի այլ երկիր, կամ Ձեր հանդեպ գոյություն ունի եվրոպական ձերբակալման հրամանի հիման վրա հանձնման որոշում, կամ միջազգային քրեական դատարանի կողմից հանձնման դիմում:

Այս դեպքերում, դուք պետք է լքեք տարածքը՝ այլապես Ֆրանսիայի տարածքի լքման պարտադիր որոշում կկայացվի Ձեր հանդեպ:

# 3. Ապաստանի հայցի քննման պայմանները

## 3.1. Քննումը Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության գրասենյակի կողմից (OFPRA)

Մարզպետարանը ապաստանի հայցի տեղեկանքի հետ միասին Ձեզ արդեն իսկ տվել է ապաստանի հայցի ձևաթուղթ, որը Դուք պետք է լրացնեք ու փոխանցեք OFPRA –ին:

Ապաստանի հայցի ներկայացման պահին, Դուք չպետք է նշեք Ձեզ համար ցանկալի պաշտպանության տեսակը (փախստականի կարկավիճակ կամ օժանդակ պաշտպանություն): Սա միասնական ընթացակարգ է, որի ընթացքում ՕՖՊՐԱՆ նախ և առաջ կուսումնասիրի Ձեր հայցը փախստականի ապաստանի տեսանկյունից, այնուհետև, եթե Ձեր իրավիճակը դրա իրավունքը չի վերապահում, կուսումնասիրի օժանդակ պաշտպանության տեսանկյունից:

Եթե OFPRA-ն Ձեզ փախստականի կարգավիճակ չի շնորհում կամ օժանդակ պաշտպանություն չի տրամադրում, Դուք կարող եք բողոքարկել Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարան (CNDA) (տես 3.2 Ապաստանի հայցի քննումը Ապաստանի իրավունքի Ազգային Դատարանի կողմից): Նմանապես, Դուք կարող եք բողոքարկել Ապաստանի իրավունքի Ազգային Դատարան, եթե ցանկանում եք վիճարկել Ձեզ միայն օժանդակ պաշտպանություն տրամադրելու մասին OFPRA -ի որոշումը:

Ձեր ապաստանի հայցի մեջ ներկայացրած տեղեկությունները գաղտնի են ու ոչ մի դեպքում դրանք չեն փոխանցվի Ձեր երկրի իշխանություններին:

### ■ OFPRA-ի ձևաթղթի լրացումը

**Ձևաթուղթը պետք է լրացվի ֆրանսերենով**, այն պետք է ստորագրվի ու ուղեկցվի ուժի մեջ գտնվող ապաստանի հայցի տեղեկանքի կրկնօրինակով, 2 լուսանկարով և Ձեր մոտ եղած հնարավոր ճանապարհորդության փաստաթղթով: Այս փաստաթղթերը պարտադիր են OFPRA -ի կողմից Ձեր հայցի գրանցման համար:

### ■ Գործի ուղարկումը

Գործի փաթեթը պատրաստ լինելուց հետո, Դուք այն պետք է ուղարկեք ապաստանի Ձեր հայցի տեղեկանքի **ստանալուց հետո ամենաուշը 21-րդ օրը** (բացի վերաքննման հայցի դեպքում), և միայն փոստային ճանապարհով ու հետևյալ հասցեով.՝

OFPRA
201, rue Carnot
94 136 FONTENAY-SOUS-BOIS CEDEX

Օրինակ.՝ եթե ապաստանի հայցի Ձեր տեղեկանքը տրվել է հունվարի 10-ին, ապա Դուք պետք է գործի փաթեթը OFPRA ուղարկեք ամենաուշը հունվարի 31-ին: Փոստի կնիքի վրայի ամսաթիվն ապացույց է հանդիսանում:

Ձեզ խորհուրդ է տրվում փաթեթն ուղարկել «ստանալու անդորրագրով պատվիրված նամակով»՝ ընթեռնելի կերպով նշելով Ձեր անունը «ուղարկող » մասում:

Եթե Ձեր գործի փաթեթը լամբողջովին պատրաստ չէ, ապա OFPRA-ն այն ետ կուղարկի և Դուք կունենաք 8 լրացուցիչ օր այն լրացնելու և ետ ուղարկելու համար: Եթե Դուք Ձեր գործը այդ ժամանակահատվածում չուղարկեք, ապա OFPRA-ն կփակի Ձեր հայցն ու ապաստանի հայցի Ձեր տեղեկանքի ժամկետը չի երկարացվի:

Դուք կարող եք լրացուցիչ տարրեր ուղարկել OFPRA ընթացակարգի ցանկացած պահին: Այդ դեպքում, OFPRA ուղարկած յուրաքանչյուր նամակում չմոռանալ նշել ապաստանի հայցի գրանցման նամակի վրա գտնվող Ձեր գործի համարը:

Յասցեի փոփոխության դեպքում, այն պետք է պարտադիր կարգով տեղեկացվի OFPRA-ին ամենակարճ ժամկետներում, փոստային ճանապարհով՝ նախընտրելով «ստանալու անդորրագրով պատվիրած նամակով»: Վերջին հայտնի հասցեով է O OFPRA-ն ուղարկելու իր նամակագրությունները, հատկապես հարցազրույցի ծանուցումը կամ ապաստանի Ձեր հայցի համար ընդունած իր որոշումը:

Պահպանեք OFPRA ուղարկած բոլոր նամակների կրկնօրինակներն ու Գրասենյակի ստացականները, ինչպես նաև փոստի ուղարկման և ստացման ապացույցները:

## ■ OFPRA-ի կողմից հայցի գրանցման ապացույցը

Երբ Ձեր դիմումը լրացված է ու ստացվել է սահմանված ժամանակահատվածում, OFPRA-ն Ձեզ նամակ է ուղարկում, որով տեղեկացնում է Ձեր ապաստանի հայցը գրանցելու և Ձեր գործին տրված գրանցման համարի մասին: Այս փաստաթուղթը պաշտոնապես հաստատում է ապաստանի Ձեր հայցի գրանցումը OFPRA –ի կողմից: Այս փաստաթուղթն է, որ Ձեզ թույլ է տալիս երկարացնել ապաստանի հայցի առաջին տեղեկանքի ժամկետը:

## ■ Յայցի քննումը նորմալ ընթացակարգով կամ արագացված ընթացակարգով

Ապաստանի Ձեր հայցը քննվում է OFPRA-ի կողմից կա՛մ նորմալ ընթացակարգով, կա՛մ արագացված ընթացակարգով:

Արագացված ընթացակարգի դեպքում, քննության տևողությունը կրճատվում է 15 օրվա, բայց Դուք օգտվում եք նույն երաշխիքներից, ինչ նորմալ ընթացակարգի ժամանակ: Բացի դրանից, OFPRA-ն միշտ հնարավորություն ունի վերադասել Ձեր հայցը նորմալ ընթացակարգի, եթե այն անհրաժեշտ է Ձեր գործի կամ Ձեր անհատական իրադրությունից ելնելով:

Ձեր հայցը քննվում է OFPRA-ի կողմից արագացված ընթացակարգով, եթե այն դրվել է արագացված ընթացակարգի տակ միակ դռնակի փուլում (տես 4.1 ապաստան հայցողի ուղին):

OFPRA-ն կարող է նաև որոշում կայացնել արագացված ընթացակարգով հետևյալ դեպքերում.՝

- եթե Դուք ներկայացրել եք կեղծ փաստաթղթեր, տվել եք կեղծ ցուցումներ կամ թաքցրել եք տեղեկություններ կամ փաստաթղթեր, որոնց նպատակը OFPRA-ին մոլորեցնել է,
- Դուք ներկայացրել եք ապաստանի այլ հայցեր այլ ինքնության տակ,

- Ապաստանի Ձեր հայցի շրջանակներում ներկայացրել եք միայն այնպիսի փաստեր, որոնք պաշտպանության կարիք չունեն,
- Ձեր հայտարարությունները անկապ են, հակասական, բացահայտորեն կեղծ կամ քիչ հավանական ու գալիս են հակասելու այն ինչը Գրասենյակը գիտի Ձեր երկրի մասին,

Եթե Դուք ցանկանում եք բողոքարկել արագացված ընթացակարգով Ձեր հայցի քննման դեմ, ապա Դուք կարող եք դա անել միայն CNDA բողոքարկման առիթով:

## ■ Հարցազրույցը l'OFPRA-ում

Ձեր հայցը OFPRA -ի կողմից գրանցելուց հետո, Դուք հարցազրույցի ներկայանալու ծանուցում կստանաք, ի բացառություն հետևյալ երկու դեպքերի.՝

- Երբ Ձեր կողմից գործում ներկայացրած տեղեկությունները բավարար են, որպեսզի OFPRA-Ն Ձեզ փախստականի ապաստան շնորհի,
- Երբ բժշկական, երկարատև ու Ձեր կամքից անկախ պատճառներով Դուք չեք կարող ներկայանալ ու մասնակցել հարցազրույցին:,

Եթե Ձեզ հարցազրույցի են հրավիրել, ապա Դուք պետք է գնաք OFPRA-ի Ֆոնտընե-Սու-Բուայում գտնվող նստատեղը: Այնտեղ, Ձեզ հետ հարցազրույց կվարի OFPRA –ի մի աշխատակից՝ «պաշտպանության պաշտոնյա», անհրաժեշտության դեպքում ներկա գտնվի OFPRA ի կողմից տրամադրված թարգմանիչ մի լեզվով, որը Դուք հայտարարել եք խոսել ապաստանի հայցի ձևաթուղթում, կամ մի լեզվով, որը բանական է ենթադրել որ խոսում եք:

Եթե Դուք չեք ներկայանում այդ ծանուցմանը, ապա Ձեր բացակայությունը կարող է բացասական հետևանքներ ունենալ ապաստանի Ձեր հայցի վրա, ու հատկապես, կարող է տեղի տալ Ձեր գործի փակմանը: Ուրեմն, խուչընդոտ հանգամանքների առկայության դեպքում, պարտադիր է տեղեկացնել OFPRA-ին առնըվազն 48 ժամ առաջ, ու տեղեկացնել ցանկացած ուշացման մասին:

Եթե ցանկանում եք, Դուք կարող եք ներկայանալ հարցազրույցին փաստաբանի, կամ OFPRA-ի կողմից լիազորված մի կազմակերպության վավերացված ներկայացուցչի ուղեկցությամբ, որոնք կարող են հարցազրույցի վերջում դիտարկումներ կատարել: Սակայն, հարցազրույցը չի հետաձգվի եթե փաստաբանը կամ կազմակերպության ներկայացուցիչը ներկա չեն ծանուցման ժամին:

Ապաստանի հայցի պատճառների ներկայացման դժվարությունների դեպքում, Դուք կարող եք դիմել OFPRA-ին եթե ցանկանում եք, որ հարցազրույցն ընթանա Ձեր ընտրության սեռի գրասենյակի գործակալի և/կամ թարգմանչի ներկայությամբ:

Հարցազրույցը գաղտնի է: Ձեր կողմից կատարած հայտարարությունները գրանցվում են հարցազրույցն անց կացրած պաշտպանության պաշտոնյայի կողմից խմբագրած զեկույցում, որը, եթե Դուք ցանկանում եք, Ձեզ կուղարկվի որոշման ընդունելուց առաջ (նորմալ ընթացակարգ), կամ ամենաուշը որոշման հետ միասին (արագացված ընթացակարգ):

### ✓ Հարցազրույց տեսիլային ասուլիսով

Հնարավոր է, որ Ձեր հարցազրույցը տեղի չունենա Ֆոնտընե-Սու-Բուայում, այլ հեռավորության վրա լսա-տեսիլային հաղորդակցման միջոցով Ձեր աշխարհագրական հեռավորության (հատկապես եթե Դուք գտնվում եք անդրծովյան տարածքում) կամ Ձեր յուրահատուկ իրավիճակի (եթե առողջական կամ ընտանեկան պատճառներով Ձեզ համար անհնար է ներկայանալ, կամ եթե Դուք գտնվում եք ազատազրկման վայրում) պատճառով: Այդ դեպքում, փաստաբանն ու կազմակերպության ներկայացուցիչը հակառակ դեպքում կլինեն Ձեր կողքին: Թարգմանիչը կլինի պաշտպանության պաշտոնյայի կողքին:

OFPRA-ի մասնաճյուղ կա ներքին Տերիտորիաներում (Գվադելուպա), որն իրավասու է քննել ապաստանի հայցերը, որոնք ներկայացվել են Ամերիկայի ֆրանսիական երեք դեպարտամենտներում՝ Գվադելուպա, Մարտինիկա և Գիանա: Եթե Դուք ապաստանի հայց եք ներկայացրել այս երեք դեպարտամենտներից մեկում, ապա Ձեզ կլսեն Ներքին Տերիտորիաներում կա՛մ տեսիլային ասուլիսով, կա՛մ Ձեր բնակության վայրի դեպարտամենտում տեղի ունեցող քննության առաքելության ժամանակ:

## ■ OFPRA-ի որոշումը

### ✓ Ժամկետները

OFPRA-ի որոշումը ձեռք բերելու համար ժամկետները փոփոխական են.՝ միջինը 15 օր արագացված ընթացակարգի դեպքում և մինչև մի քանի ամիս՝ նորմալ ընթացակարգի դեպքում: OFPRA-ի երկար լռելը չի նշանակում, որ Ձեր հայցը մերժում է ստացել: Եթե OFPRA –ն չի կարողանում որոշում կայացնել 6 ամսվա ընթացքում, ապա այդ մասին գրավոր կտեղեկացվի: Ուրեմն, Դուք պարբերաբար պետք է հետևեք փոստային նամակներին:

### ✓ Դրական որոշումը

Եթե ապաստանի Ձեր հայցին դրական պատասխան է տրվել, ապա

- Կա՛մ Ձեզ փախստականի կարգավիճակ է շնորհվել ու OFPRA-ն Ձեզ կփոխանցի փախստականի կարգավիճակի ճանաչման որոշումը,
- կա՛մ Ձեզ տրամադրվել է ժանդակ պաշտպանության կարգավիճակ ու OFPRA-ն Ձեզ կփոխանցի օժանդակ պաշտպանության ճանաչման որոշումը:

### ✓ Բացասական որոշումը

Եթե ապաստանի Ձեր հայցին բացասական պատասխան է տրվել, ապա OFPRA-ն Ձեզ կուղարկի ֆրանսերեն լեզվով խմբագրած որոշումը, ինչպես նաև մի լեզվով թարգմանած փաստաթուղթ, որը բանականորեն ենթադրվում է որ խոսում եք, ուր նշված է, որ Ձեր հայցը մերժվում է:

Դուք կարող եք բողոքարկել այդ որոշումը CNDA-ում ու այդ ծանուցման ամսաթվից հաշված մեկ ամսվա ընթացքում:

Եթե Դուք ցանկանում եք օգտվել անվճար իրավաբանական օգնությունից այդ որոշման դեմ բողոքարկելու համար, ապա Դուք պետք է դիմեք այդ ստանալու համար կա՛մ մերժման որոշման ծանուցումից հաշված 15 օրվա ընթացքում, կա՛մ բողոքարկումը ներկայացնելիս:

| |
|---|
| Եթե OFPRA-ի բացասական որոշման ծանուցումից հետո մեկ ամսյա վերջնաժամկետում Դուք բողոքարկում չեք ուղարկել CNDA, ապա Ֆրանսիայի տարածքում կեցության Ձեր իրավունքն ավարտվում է և Դուք պետք է լքեք Ֆրանսիան: |

## 3.2. Քննումը Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանի կողմից(CNDA)

## ■ Բողոքարկման ժամկետը

Դուք OFPRA-ի կողմից մերժման մասին ծանուցումից հետո մեկ ամիս ժամանակ ունեք Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարան հայց ներկայացնելու համար: Դուք կարող եք կա՛մ պաշտպանություն խնդրել OFPRA-ի կողմից բացասական որոշման դեպքում, կա՛մ խնդրել փախստականի կարգավիճակի ճանաչում՝ օժանդակ պաշտպանության դեպքում: Այս դեպքում, եթե CNDA-ն Ձեզ չի շնորհում փախստականի կարգավիճակ, ապա նա չի ետ վերցնի OFPRA-ի կողմից շնորհած օժանդակ պաշտպանությունը:

Այդ բողոքարկումը պետք է CNDA հասնի մեկ ամսվա վերջնաժամկետի ավարտից առաջ (օրինակ.՝ եթե բացասական պատասխանը Դուք փոստատնից վերցրել եք հունվարի 20-ին, ապա բողոքարկումը պետք է գրանցվի CNDA-ում ամենաուշը փետրվարի 21-ին): Ձեր բողոքարկումը պետք է ուղարկվի մեկ ամսվա վերջնաժամկետի ամսաթվից առաջ: Դուք կարող եք բողոքարկումն ուղարկել ըստ Ձեր ընտրության ստանալու անդորրագրով պատվիրված նամակով, սովորական նամակով կամ ֆաքսով: Եթե Ձեր բողոքարկման համար դատարանի կողմից ընդունման մեկ ամսվա ժամկետը լրացել է, այն կդիտվի որպես անընդունելի, այսինքն կմերժվի առանց լսման կամ քննման:

## ■ Բողոքարկումը

Պետք է պահպանել հետևյալ պայմանները.՝

- նախ և առաջ, ուշադիր կարդացեք OFPRA-ի բացասական որոշման ետևի մասում գրված բոլոր բացատրությունները,
- բողոքարկումը պետք է խմբագրվի ֆրանսերենով սովորական թղթի վրա (յուրահատուկ ձևաթուղթ գոյություն չունի), ուր պետք է նշեք Ձեր անունները, ազգանունները, քաղաքացիական լրիվ կեցությունը, մասնագիտությունն ու հասցեն: Դուք պետք է նշեք, որ խոսքը գնում է բողոքարկման մասին ու ընդգծեք OFPRA-իգործի համարը,
- Դուք պետք է պարտադիր կարգով կցեք OFPRA-ի որոշման պատճենը Ձեր բողոքարկմանը,
- Դուք պետք է հիմնավորեք Ձեր բողոքարկումը, այսինքն բացատրեք թե Ինչո՞ւ համաձայն չեք OFPRA-ի մերժման պատասխանի համար բերված պատճառների հետ կամ այն պատճառների հետ, որոնք դրդել են OFPRA-ին Ձեզ օժանդակ պաշտպանություն շնորհել և ոչ թե փախստականի կարգավիճակ,
- Դուք պետք է նշեք Ձեր տրամադրության տակ գտնվող Ձեր ինննքնությունն ու քաղաքացիությունն ապացուցող փաստաթղթերը,
- Դուք պետք է կցեք նաև Ձեր պատմությունը լրացնող փաստաթղթերը,
- Ձեր բողոքարկման մեջ Դուք պետք է նշեք, թե ո՞ր լեզվով եք ցանկանում արտահայտվել դատարանի կողմից լսման օրը,

Ինչ վերաբերում է Ձեր քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերին, նախընտրելի է գործին կցել պատճենները ու պահպանել անձնագրի կամ ազգային ինքնության քարտի բնօրինակները, եթե իհարկե նման փաստաթղթեր ունեք, ինչը Ձեզ թույլ կտա փոստատնից ստանալ դատարանի կողմից պատվիրված նամակով ուղարկված նամակագրությունը: Դուք կարող եք ներկայացնել բնօրինակները լսման օրը՝ դատարանի անձնակազմի հարցման դեպքում:

Ինչ վերաբերում է Ձեր պատմությունն ապացուցող փաստաթղթերին, ապա նախընտրելի է ներկայացնել բնօրինակները՝ Ձեզ մոտ պահելով դրանց պատճենները: Այդ փաստաթղթերը Ձեզ կարող են ետ վերադարձվել լսումների օրը եթե Դուք դրանք պահանջեք, կամ դրանք կարող են Ձեզ ուղարկվել հետագայում փոստային ճանապարհով: Ձեր պատմությունն ապացուցող փաստաթղթերը պետք է թարգմանված լինել ֆրանսերեն: Թարգմանության բացակայության դեպքում, CNDA-ն չի կարողանա օգտագործել դրանք: Սակայն պարտադիր չէ, որ թարգմանությունները կատարված լինեն երդվյալ թարգմանչի կողմից, բացի այն

թարգմանություններից, որոնք վերաբերում են քաղաքացիական կեցությանը, ոստիկանության կամ իրավական ակտերին:

- Դուք պետք է ստորագրեք բողոքարկումը: Եթե Դուք անչափահաս եք, ապա Ձեր օրինական ներկայացուցիչը պետք է այն ստորագրի,
- Դուք պետք է պահպանեք բողոքարկման ուղարկման կամ հանձնման ապացույցները, ինչպես նաև բողոքարկման պատճենը,
- Դուք պետք է CNDA-ին տեղեկացնեք հասցեի ցանկացած փոփոխման մասին,
- Դուք կարող եք դիմել Ձեր բողոքարկման գրանցումից հետո Ձեր գործը Ձեզ ուղարկել:

Եթե Ձեր բողոքարկումը կանչ է ստացել հասարակական լսման համար, ապա Ձեզ անձնապես կծանուցեն վերջինիս լսման համար: Այս դեպքում, Դուք կարող եք հավելյալ տեղեկություններ ներկայացնել գրավոր կերպով՝ մինչև ծանուցման մեջ նշված վերջնական ամսաթիվը:

Եթե Ձեր հայցը չի ներկայացնում որևէ լուրջ փաստ, որոնք կարող են կասկածի տակ դնել OFPRA-ի որոշումը, զեկուցողի կողմից Ձեր գործի ուսումնասիրությունից հետո, CNDA-Ն կարող է մերժել Ձեր բողոքարկումը՝ առանց Ձեզ լսումների կանչելու:

## ■ Բողոքարկման ընդունման անդորրագիրը

Ձեր բողոքարկման գրանցումից հետո, CNDA- ն կարող է Ձեր կողմից նշված հասցեով Ձեզ ուղարկել «բողոքարկման ստացման անդորրագիր» կոչվող փաստաթուղթը: Այդ փաստաթուղթն ապացուցում է, որ Ձեր բողոքարկումն իսկապես գրանցվել է: Այն Ձեզ թույլ է տալիս դիմել ապաստանի հայցի Ձեր տեղեկանքի ժամկետի երկարացման համար, քանի որ թույլտվություն ունեք մնալ Ֆրանսիայում մինչև որ CNDA-Ն որոշում կայացնի Ձեր հայցի վերաբերյալ:

## ■ Փաստաբանի օգնությունը

Դուք հնարավորություն ունեք օգտվել փաստաբանի օգնությունից CNDA-ում լսումների ընթացքում :

Դուք իրավունք ունեք դիմել անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար: Փաստաբանի համար ծախսերը լիովին վճարվում են Պետության կողմից ու փաստաբանն իրավունք չունի Ձեզանից հոնորարներ պահանջել: Անվճար իրավաբանական օգնության դիմելու համար, Դուք պարտավոր եք կա՛մ համապատասխան դիմում ներկայացնել CNDA-ի իրավաբանական օգնության գրասենյակ՝ բողոքարկում ներկայացնելու համար իրավական օգնության դիմել OFPRA-ի մերժման որոշման օրվանից 15 օրվա ժամանակահատվածում, կա՛մ իրավաբանական օգնության դիմում ներկայացնել ամենաուշը բողոքարկման ժամանակ:

CNDA-ի Իրավաբանական Օգնության Գրասենյակի (BAJ) հասցեն.՝

Cour nationale du droit d'asile
35, rue Cuvier
93 558 MONTREUIL-SOUS-BOIS

Դուք կարող եք տալ իրավաբանական օգնությունն իր վրա վերցրած փաստաբանի անունը կամ խնդրել CNDA-ին մեկին նշանակել: Եթե Դուք օգտվում եք իրավաբանական օգնության ծառայությունից, Դուք ոչ մի դեպքում չպետք է վճարեք նշանակած փաստաբանին՝ նույնիսկ եթե նա պահանջում է դա Ձեզանից:

Իրավաբանական օգնության Ձեր դիմումը կարող է մերժվել միայն եթե Ձեր բողոքարկումը բացահայտորեն անընդունելի է:

## ■ Լսումը CNDA-ում

CNDA-ն Ձեզ ծանուցում կուղարկի ներկա գտնվելու Ձեր բողոքարկման քննության լսումներին: Այդ ծանուցագիրը Ձեզ կհասնի լսումների ամսաթվից առնըվազն 1 ամիս առաջ, բացի այն դեպքից, երբ Ձեր բողոքարկումը քննվում է արագացված ընթացակարգով: Այդ դեպքում, Դուք կծանուցվեք լսումներից 15 օր առաջ: Այդ լսումները տեղի կունենան Մոնտրոյում գտնվող CNDA-ի շենքում կամ տեսիլային ասուլիսով Ձեր հայցի ներկայացրած անդրծովյան դեպարտամենտում:

Ձեր բողոքարկումը քննող CNDA-ի դատական կազմը նախագահում է մեկ դատավոր: Այն բաղկացած է Միացյալ Ազգերի Փախստականների հարցերի Բրձրագույն Յանձնախմբի կողմից նշանակած որակավորված պաշտոնյայից: Դատական կազմը որոշում է կայացնում Ձեր դեպքի վերաբերյալ զեկուցողին լսելուց հետո, որը վերլուծում է ապաստանի Ձեր դիայցը առանց ազդեցություն գործելու որոշման վրա՝ հիմնվելով Ձեր ու Ձեր փաստաբանի կողմից տրված բացատրությունների վրա, եթե Դուք փաստաբան ունեք:

Եթե Գրասենյակը որոշում է կայացրել արագացված գործընթացով կամ եթե այն կարծում է, որ Ձեր հայցն անընդունելի է, ապա CNDA-ի միակ դատավորն է որոշում կայացնում Ձեր բողոքարկման վերաբերյալ 5 շաբաթվա ժամկետում:

Իր իսկ նախաձեռնությամբ կամ ըստ Ձեր խնդրանքի, Դատարանը կարող է որոշել վճիռ կայացնել դատական ողջ անձնակազմով, եթե նա գնահատի, որ հայցը չպետք է ոքննվի արագացված ընթացակարգով, անընդունելի չէ կամ լուրջ դժվարություն է ներկայացնում:

CNDA-ն ապահովում է Ձեր բողոքարկման մեջ նշած լեզվով թարգմանչի ներկայությունը, կամ, դրա բացակայության կամ չլինելու դեպքում այն լեզվով, որով Ձեզ լսել է OFPRA-ն: Ձեր ներկայությունը լսումներին պարտադիր է: Խոչընդոտող պատճառների կամ ուշացման դեպքում, հարկավոր է դրա մասին տեղեկացնել CNDA-ին: Եթե Դուք չեք կարող ներկա գտնվել լսումներին, ապա Դուք կարող եք դիմել հետաձգելու այն՝ գրավոր բացատրություններ տալով այն պատճառների մասին, ըստ որոնց դուք չեք կարող ներկա գտնվել: Յետաձգումը իրավունք չէ, CNDA-ի դատական կազմի նախագահը իրավունք ունի միայնակ որոշելու Ձեր բողոքարկման քննման հնարավոր հետաձգումը մի ավելի ուշ օրվա:

Լսումները կատարվում են դռնբաց: Սակայն Դուք կարող եք դիմել դատական կազմի նախագահին Ձեր գործը լսել դռնփակ նիստում, այսինքն, որ Ձեր գործը քննվի առանց մյուսների ներկայության: Այդ դեպքում, դռնփակ նիստն ինքնաբերաբար շնորհվում է: Դատական կազմի նախագահը կարող է նաև այն որոշել:

## ■ CNDA-ի որոշումը

CNDA-ն Ձեզ ուղարկում է իր որոշումը ֆրանսերեն լեզվով փոստային ճանապարհով «ստանալու անդորրագրով պատվիրված նամակով» և որոշման իմաստն արտահայտող մի փաստաթուղթ թարգմանված մի լեզվով, որ բանականորեն հենթադրվում է, որ հասկանում եք:

CNDA-ն, կարող է՝

- չեղյալ հայտարարել OFPRA -ի մերժման որոշումը ու Ձեզ փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն շնորհել: Այդ դեպքում, Դուք կօգտվեք նույն իրավունքներից, ինչը որ կունենայիք, եթե OFPRA-ն երկու կարգավիճակներից մեկը Ձեզ շնորհած լիներ,
- չեղյալ հայտարարել OFPRA-ի օժանդակ պաշտպանության շնորհման որոշումը ու Ձեզ փախստականի կարգավիճակ շնորհել,
- հաստատել OFPRA-ի մերժման որոշումը ու մերժել Ձեր հայցը,
- որոշակի դեպքերում, չեղյալ համարել OFPRA -ի որոշումն ու խնդրել վերաքննել Ձեր հայցը:

CNDA -ի որոշումը կարող է Պետական Խորհրդում վճռաբեկ բողոքարկման առարկա հանդիսանալ: Վերջինս չի վերաքննում Ձեր հայցն ամբողջությամբ, այլ միայն քննում է որոշ իրավաբանական հարցեր: Այս գործընթացը երկար է ու դրա համար անհրաժեշտ է մասնագիտացված փաստաբան: Դուք կարող եք դիմել իրավաբանական օգնություն ստանալու համար: Այս բողոքարկումը չի երկարացնի Ֆրանսիայում մնալը ու արգելք չի հանդիսանա Ձեզ դեպի Ձեր երկիրին ուղարկելուն: Ցանկալի է խորհրդակցել մի կազմակերպության կամ մի փաստաբանի հետ այդ գործընթացի առընչությամբ:

## 3.3. Ապաստանի հայցի անընդունելիությունն ու փակումը

### ■ Անընդունելի հայց

CNDA-ն կարող է անընդունելիության որոշում կայացնել երբ.՝

- Ձեզ արդեն իսկ իրական պաշտպանություն է շնորհվել որպես ապաստան Եվրոպական միության մի այլ Պետության կողմից,
- Ձեզ փախստականի կարգավիճակ և իրական պաշտպանություն է շնորհվել մի երրորդ Պետության կողմից որտեղ Դուք իսկապես վերընդունելի եք:

Դուք կարող եք բողոքարկել այդ որոշման դեմ CNDA:

Ձեր հայցի անընդունելիության դեպքում, Դուք այլևս իրավունք չունեք մնալ Ֆրանսիայի տարածքում ու Դուք պարտավոր եք լքել Ֆրանսիան, նույնիսկ այն դեպքում, եթե Դուք բողոքարկում եք ներկայացրել CNDA :

### ■ Հայցի քննության փակումը

#### ✓ Փակման դեպքերը

OFPRA-ն կարող է փակել Ձեր հայցը եթե.՝

- Դուք տեղեկացրել եք հարցազրույցի ժամանակ կամ նամակագրությամբ, որ ցանկանում եք ետ վերցնել ապաստանի Ձեր հայցը,
- Դուք ապաստանի Ձեր հայցը չեք ներկայացրել 21 օրվա ընթացքում, կամ Դուք հարցազրույցին չեք ներկայացել,
- Դուք դիտմամբ մերժում եք կարևոր տեղեկություններ տրամադրել Ձեր հայցի քննության համար,
- Հնարավոր չի եղել կապի մեջ մտնել Ձեզ կետ՝ սահմանված ժամանակահատվածում Ձեր հասցեի չփոխանցման պատճառով:

Ձեր հայցի փակման դեպքում, Դուք այլևս իրավունք չեք ունենա մնալ Ֆրանսիայի տարածքում և Դուք պետք է լքեք Ֆրանսիան:

#### ✓ Վերաբացումը

Ձեր հայցի քննության փակման դեպքում, փակման որոշումից հետո 9 ամսվա ընթացքում կարող եք դիմել հայցի վերաբացման համար:

Դրա համար անհրաժեշտ է ներկայանալ մարզպետարան՝ նորից այնտեղ գրանցվելու համար:

Այնուհետև, մարզպետարանում գրանցվելուց հետո Ձեզ 8 օր ժամանակ է տրվում՝ Ձեր հայցը վերանայման նպատակով OFPRA ուղարկելու համար, որն էլ նորից կբացի Ձեր գործն ու կվերսկսի ապաստանի Ձեր հայցի ուսումնասիրությունն այնտեղ, որտեղ այն ընդհատվել էր:

Եթե Դուք վերաբացման հայց եք ներկայացրել 9 ամսվա ընթացքում, ապա Դուք օգտվում եք Ֆրանսիայում կեցության իրավունքից ու Ձեզ է տրվում ապաստանի հայցի տեղեկանք:

9 ամսվա ժամկետն անցնելուց հետո, վերաբացման Ձեր հայցը կուսումնասիրվի որպես վերաքննման հայց (տես 3.4 Վերաքննում):

## 3.4. **Վերաքննումը**

CNDA-ի կողմից ապաստանի Ձեր հայցի մերժումից հետո կամ, եթե OFPRA –ի որոշման ծանուցումից հետո մեկ ամսվա ընթացքում Դուք բողոքարկում չեկք կատարել, ապա Դուք հնարավորություն ունեք դիմել OFPRA՝ նորից քննելու Ձեր գործը բայց միայն եթե Դուք «նոր փաստեր» ունեք, այսինքն.՝

- դրանք ի հայտ եկած լինեն CNDA-ի որոշման ամսաթվից հետո կամ մինչ այդ որոշումը, բայց որի մասին Դուք տեղեկացվել եք հետո,
- դրանք այնպիսի բնույթ են կրում, որ արդարացնում են հետապնդումների կամ լուրջ սպառնալիքների անձնական վախերը, որոնց մասին Դուք խոսում եք ետ վերադառնալու դեպքում:

Դուք կարող եք խորհրդակցել մի կազմակերպության կամ մի փաստաբանի հետ:

Դուք պետք է ներկայանաք մարզպետարան Ձեր հայցը գրանցելու համար:

Այս նոր գրանցումից հետո 8 օր ժամանակ ունեք Ձեր հայցը OFPRA ներկայացնելու վերաքննման համար: Եթե Ձեր հայցը լրիվ չէ, գրասենյակը կխնդրի Ձեզ լրացնել այն 4 օրվա ընթացքում:

Այնուհետև, OFPRA –ն անցնում է Ձեր գործի նախնական քննությանը ու գործի ընդունելուց 8 օրվա ընթացքում դրա ընդունելի բնույթի վերաբերյալ որոշում կկայացնի: Այդ քննության ժամանակ Ձեզ հարցազրույցի հրավիրելը պարտադիր չէ:

Այդ քննումից հետո, OFPRA –ն կարող է Ձեր հայցն անընդունելի հայտարարել եթե Ձեր կողմից ներկայացրած փաստերն ու տարրերը պաշտպանություն ստանալու հավանակության աստիճանի նշանակալից փոփոխության բնույթ չեն կրում:

Եթե OFPRA –ն ապաստանի Ձեր հայցն ընդունելի է հայտարարում, ապա այն կուսումնասիրվի արագացված ընթացակարգով ՝ ի բացառություն դրա հակառակ որոշման:

Վերաքննության առաջին հայցի դեպքում, եթե մարզպետարանը գտնում է, որ Ձեր հայցը ներկայացվել է երկրից օտարման համար արգելք հանդիսանալու նպատակով, որ OFPRA –

և այն անընդունելի է համարում, ապա Դուք OFPRA –ի որոշումից հետո այլևս իրավունք չունեք մնալ Ֆրանսիայի տարածքում:

Վերաքննության երկրորդ հայցի դեպքում, Դուք այլևս մնալու իրավունք չունեք:

Այս երկու դեպքերում, Ձեզ կարող են մերժել տալու ապաստանի հայցի տեղեկանքը կամ երկարացնելու դրա ժամկետը, և Ձեզ կարող են հեռացնել երկրից նույնիսկ եթե Դուք բողոքարկել եք CNDA:

# 4. Ապաստան հայցողի ուղին

## 4.1. Ուղորդում ապաստան հայցողին

### ■ Առաջին ընդունումն ու կողմնորոշումը

Ապաստանի Ձեր հայցն OFPRA ուղարկելու համար, Դուք նախ և առաջ պետք է գրանցեք Ձեր հայցը միակ դռնակում:

Միակ դռնակը բաղկացած է Ձեզ ընդունելիությունն ապահովելու համար հատուկ հավաքված մարզպետարանի աշխատակիցներից և Էմիգրացիայի ու Ինտեգրացիայի Ֆրանսիական Գրասենյակի (OFII) աշխատակիցներից:

Գոյություն ունեն Ֆրանսիայի մայրցամաքային տարածքում սփռված 34 միակ դռնակներ (կարող եք տեսնել ցուցակը հավելվածում):

Հարկավոր չէ փոստային հասցե ունենալ ապաստանի Ձեր հայցի գրանցման համար:

Միակ դռնակ գնալուց առաջ, Դուք պետք է ներկայանաք նախա-ընդունելության մի կազմակերպություն, որի նպատակը Ձեզ Ձեր քայլերում ուղեկցելն է: Դրանց հասցեները կարելի է ստանալ Ձեր բնակության վայրի միակ դռնակում:

#### ✓ Նախա-ընդունելությամբ զբաղվող կազմակերպությունները

Նախնական ընդունելիությամբ զբաղվող կազմակերպությունների առաքելությունները հետևյալներն են.՝

- տեղեկացնել ապաստանի հայցի գրանցման էլեկտրոնային ձնաթուղթը, ուր նշվում են Ձեր ինքնությունն ու ընտանիքի կազմը,
- ժամադրություն վերցնել միակ դռնակում և Ձեզ հանձնել ծանուցումը, ուր նշված կլինեն այն վայրը, ամսաթիվն ու ժամը, ուր Դուք պարտադիր կարգով պետք է միակ դռնակ ներկայանաք: Այդ ժամադրությունը տեղի է ունենում կազմակերպություն ներկայանալուց առնըվազն 3 օր հետո: Այն կարող է անցնել 10 օրվա բազմաթիվ հայցերի դեպքում,
- վերցնել միակ դռնակում պահանջվող անձնական լուսանկարները:

Ձեր գործն ամբողջությամբ միակ դռնակին է ուղարկվում աննյութական եղանակով:

<u>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ</u>. Դուք պետք է պարտադիր կարգով ներկա գտնվեք ծանուցման մեջ նշած օրն ու ժամին: Ուշացման դեպքում Ձեզ այլևս չեն ընդունի, ու Դուք պետք է նորից ներկայանաք նախնական ընդունելության կազմակերպություն՝ նոր ժամադրություն ստանալու համար:

#### ✓ Միակ դռնակի դերը

Ապաստանի Ձեր հայցի գրանցումը միակ դռնակում բացկացած է 3 էտապից.՝

**Առաջին էտապի ընթացքում**, մարզպետարանի աշխատակիցը վավերացնում է նախնական ընդունման կազմակերպության կողմից միակ դռնակին փոխանցված ողջ տեղեկությունները:

Այդ աշխատակիցը վերցնում է նաև Ձեր 10 մատների մատնահետքերն ու անհատական հարցազրույց է ունենում Ձեզ հետ՝ պարզելու համար Ձեր երկրից դուրս գալուց հետո

անցած ճանապարհը՝ սահմանելու համար ապաստանի Ձեր հայցի քննության պատասխանատու երկիրը ( տես 2.1 Ապաստանի Ձեր հայցի քննության պատասխանատու Պետության ճշտորոշումը):

Այս առաջին էտապի վերջում, Ձեզ կտեղեկացվի ապաստանի Ձեր հայցի քննությանը կիրառվող ընթացակարգի մասին:

Եթե ապաստանի Ձեր հայցը հնարավոր է ընկնի մի այլ երկրի պատասխանատվության տակ, ապա իրականացվում է «Դուբլին III» կոչվող գործընթացը (Տես 2.1 Ապաստանի Ձեր հայցի քննության պատասխանատու Պետության ճշտորոշումը):

Եթե ապաստանի Ձեր հայցն ընկնում է Ֆրանսիայի պատասխանատվության ներքո, ապա OFPRA-ն է իրավասու այն քննելու համար՝ նորմալ ընթացակարգով կամ արագ ընթացաքարգով: Արագ ընթացակարգի դեպքում, OFPRA-ի կողմից քննության ժամկետներն ընդհանրապես 15 օր են, բայց երաշխիքները նույնն են երկու ընթացակարգերում:

**Ապաստանի Ձեր հայցն ինքնաբերաբար քննվում է արագ ընթացակարգով հենց միակ դռնակից երկու դեպքում.՝**

- եթե Դուք ապահով երկիր համարվող մի երկրի քաղաքացի եք ( այդ երկրների ցուցակը գոյություն ունի մարզպետարանում կամ OFPRA ի ինտերնետային կայքի վրա),
- Եթե Դուք ապաստանի մի առաջին հայց եք ներկայացրել, որը վերջնականապես մերժվել է ու եթե Դուք վերաքննության հայց եք ներկայացնում:

**Ապաստանի Ձեր հայցը կարող է քննվել արագ ընթացակարգով հենց միակ դռնակից երկու դեպքում.՝**

- Եթե Դուք մերժում եք Ձեր մատնահետքերը տալուց,
- Եթե Դուք ցանկանում եք իշխանություններին մոլորեցնել կեղծ փաստաթղթեր ներկայացնելով, կեղծ տեղեկություններ տալով կամ որոշ տեղեկություններ թաքցնելով.՝
- Եթե Դուք բազմաթիվ հայցեր կամ բազմաթիվ ինքնություններ եք ներկայացրել,
- Եթե Դուք ուշացրել եք Ֆրանսիա մուրք գործելուց հետո ապաստան հայցելը (ավելի քան 120 օր),
- Եթե Դուք ապաստան եք հայցում միայն երկրից հեռացնելուն անհաջողության հասնելու համար,
- Եթե Ձեր ներկայությունը հասարակական կարգի, հասարակական ապահովության կամ Պետական ապահովության համար լուրջ սպառնալիք է ներկայացնում,

Գրանցումից հետո, մեկ ամիս վավերություն ունեցող ապաստանի հայցի տեղեկանք է Ձեզ տրվում: Այդ ժամանակահատվածում, Դուք պետք է ուղարկեք Ձեր լրացրած ձևաթուղթը OFPRA (տես 3-1):

**Երկրորդ էտապի ընթացքում**, OFII-ի մի աշխատակից գնահատում է Ձեր անձնական իրավիճակը հարցազրույցի միջոցով (տես 4.1 ապաստանի հայցողի ուղեկցում): Այդ գնահատումը չի կարող վերաբերվել ապաստանի Ձեր հայցի դրդապատճառներին, որոնք կուսումնասիրվեն OFPRA-ում:

Եթե Ձեզ բնակության վայր չի տրվել ու եթե Դուք ցանկանում եք բնակեցվել, ապա այդ աշխատակիցը բնակության վայր է փնտրում՝ Ձեզ այնտեղ ւղարկելու համար ( տես 4.2 Ապաստանի հայցողի բնակեցումը):

Նա վերջապես իրավունք է բացում ապաստան հայցողի նպաստի համար (տես 5.1 Ապաստան հայցողի նպաստը):

### ✓ Ուղեկցումը միակ դռնակն անցնելուց հետո

Միակ դռնակով անցնելուց հետո, Ձեր բնակության վայրում Ձեզ ուղեկցում կառաջարկվի, խոսքը գնում է Ապաստան Հայցողի համար Ընդունման Կենտրոնի մասին (CADA) կամ կայուն կոչված (ոչ հյուրանոցային) շտապ բնակության վայրի մասին:

Եթե Դուք նմանատիպ վայրում բնակություն չեք ստացել, ապա Ձեր ուղեկցումը կկատարվի OFII-ի կողմից լիազորված մասնագիտացված կազմակերպության կողմից:

Այդ ուղեկցումն իր մեջ պարունակում է հատկապես բնակեցումն ու OFPRA ներկայացվող ապաստանի հայցի գործի փաթեթի կազմումը:

## ■ Ընդունման նյութական պայմանները

Ապաստանի հայցի գրանցման համար միակ դռնակում ժամադրությունից հետո, OFII-ն կառաջարկի զբաղվել Ձեզանով: Ընդունելով այդ առաջարկը, Դուք կարող եք օգտվել ապաստանի գործընթացի ողջ ընթացքում գործող յուրահատուկ ընդունման նյութական պայմաններից:

Ընդունման նյութական պայմաններն իրենց մեջ ներ են առնվում.՝

Ընդունման նյութական պայմաններն իրենց մեջ ներ են առնվում.՝

- Բնակեցում Ապստան Հայցողների համար Ընդունման Կենտրոնում (CADA) կամ շտապ բնակեցման կենտրոնում՝ Ձեր և անհրաժեշտության դեպքում Ձեր ընտանիքի անդամների համար,
- Ուղեկցում Ձեր վարչական ու սոցիալական քայլերում՝ ապաստանի Ձեր հայցի գործին, ինչպես նաև Ձեզ շնորհած սոցիալական իրավունքներին հասանելությանը հետևելու համար,
- Ամսեկան նպաստ (նպաստ ապաստան հայցողի համար (ADA), որի գումարը կհարմարեցվի Ձեր ընտանիքի կազմին:

Եթե Դուք մերժեք բնակեցման առաջարկությունը, ապա Դուք կկորցնեք ընդունման համար նախատեսած բոլոր նյութական պայմանները:

Ձեզ առաջարկվող աջակցությունը կապված է ապաստան հայցողի կարգավիճակի հետ: Դք դրանց իրավունքը կկորցնեք ապաստանի Ձեր հայցին վերջնական որոշում կայացնելուց հետո: Եթե մի այլ երկիր է պատասխանատու ապաստանի Ձեր հայցի քննման համար, ապա Դուք կարող եք օգտվել ընդունման նյության պայմաններից մինչն դեպի այդ երկիր Ձեր փոխանցումը:

## ■ Միակ դռնակի կողմից դյուրաբեկության հաշվի առնելը

Միակ դռնակով անցնելուց ու ապաստանի Ձեր հայցի գրանցումից հետո, OFII-ի մի աշխատակից Ձեզ անձամբ կընդունի ընդունման տեսակետից Ձեր անհատական կարիքները գնահատելու համար:

Հարցազրույցը գաղտնի է:

Ձեզ կտվրի հարցերի մի շարան՝ ճշտելու համար արդյո՞ք ընդունման յուրահատուկ պայմաններ են Ձեզ հարկավոր թե ոչ: OFII-ի աշխատակիցը հաշվի կառնի այս տարրերը Ձեզ հարմարեցված բնակության վայր ուղարկելու համար:

Դուք իրավունք ունեք համաձայնվել կամ մերժել պատասխանելու այդ հարցացուցակին: Մերժման դեպքում, վարչարարությունն այլևս պատասխանատու չէ Ձեր կարիքներին անհամապատասխան բնակության վայր ուղարկելու կամ OFPRA-ին Ձեր իրավիճակի մասին չտեղեկացնելու համար:

Եթե Դուք Ֆրանսիա եք եկել բժշկական գործով, ապա OFII-ի աշխատակիցը գաղտնի փակ նամակով գործը կուղարկի OFII-ի բժիշկին, որն էլ կորոշի թե արդյո՞ք Ձեր անձնական

իրավիճակը ընդունման յուրահատուկ պայմանների կարիք ունի թե՞ ոչ: Եթե Դուք հիվանդ եք, ապա Ձեզ կուղարկեն դեպի բուժման վայր կամ ամենամոտ գտնվող հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունք:

Եթե OFII-ի աշխատակիցը դյուրաբեկություն է հայտնաբերում, ապա նա կարող է Ձեր համաձայնությամբ դրա մասին տեղեկացնել OFPRA-ին: Այս տեղեկության նպատակը անհրաժեշտության դեպքում OFPRA-ի կողմից ապաստանի Ձեր հայցի քննման համար յուրահատուկ պայմաններ ստեղծելն է (օրինակ մուտքի հարմարեցում հաշմանդամ անձանց համար, կամ խուլ ու համրերի համար նախատեսած թարգմանիչ տրամադրելու համար): OFPRA-ն կգնահատի անհրաժեշտ պայմանները:

Դյուրաբեկության իրավիճակի հետ կապված պայմանները կարող են հաշվի առնվել սոցիալական աշխատակիցների կողմից ապաստանի Ձեր հայցի քննության ողջ ընթացքում բնակության վայրերում կամ ընդունող կազմակերպություններում, որոնք Ձեզ ուղեկցում են սոցիալական և վարչական քայլերում:

.

## 4.2. Ապաստան հայցողի բնակեցումը

### ■ Բնակեցման վայրերը

Գոյություն ունեն ապաստան հայցողների բնակեցման համար նախատեսած 500 000 տեղ, Ֆրանսիայի ողջ տարածքում սփռված կա՛մ CADA-ում, կա՛մ շտապ բնակեցման կառույցներում: Շտապ բնակեցման կայանները տարբեր են.՝ բնակարաններ, համատեղ կենտրոններ կամ հյուրանոցային սենյակներ: Բոլոր այս վայրերը մատչելի են միայն ապաստան հայցողների համար և նրանց ընտանիքների համար:

Այս բնակություններից օգտվելու համար հարկավոր է ունենալ ապաստան հայցողի տեղեկանք: Այն անձինք, որոնց ապաստանի հայցը կախված է Եվրոպական միության անդամ մի Այլ Պետությունից, չեն կարող օգտվել CADA-ում բնակեցման իրավունքից:

Յնարավոր է, որ CADA-ում կամ շտապ բնակեցման կառույցում Դուք բաժանեք որոշ սենյակներ (խոհանոց, լոգարան, զուգարան) այլ անձանց կամ ընտանիքների հետ:

CADA-ներում և շտապ բնակեցման վայրերում, Դուք կօգտվեք վարչական ( ապաստանի հացի գործընթացի ուղղորդում) և սոցիալական (բուժօգնություն, երեխաների դպրոց հաճախում և այլն) աջակցությունից: Այս ամենը ֆինանսավորվում և համակարգվում է Պետության կողմից: Բնակեցման կենտրոնները սովորաբար ղեկավարվում են կազմակերպությունների կողմից:

### ■ Ուղորդում դեպի բնակեցում

Բնակեցման առաջարկությունը ներառնող ընդունման նյութական պայմանները Ձեզ են առաջարկվում ապաստանի Ձեր հայցի արձանագրումն իրականացնող միակ դռնակում գտնվող OFII-ի կողմից: Եթե Դուք մերժում եք աջակցության հնարավորությունը, ապա Դուք չեք կարող օգտվել ապաստան հայցողի համար նախատեսած նպաստից (ADA):

**Եթե Դուք ընդունում եք բնակեցման առաջարկը, ապա OFII-ն, ըստ բնակեցման ազատ տեղերի Ձեզ կառաջարկի մի տեղ CADA-ում կամ շտապ բնակեցման մի վայրում**: Նման տեղերի բացակայության պայմաններում, OFII-ն Ձեզ կուղարկի դեպի կազմակերպություններ, որոնք հյուրանոցում բնակեցման վայր կփնտրեն Ձեզ համար:

Բնակեցման Ձեր հայցը կուսումնասիրվի OFII-ի կողմից դեպարտամենտում, շրջանում կամ Ֆրանսիայի ողջ տարածքում ազատ տեղերի համաձայն:
**Ձեզ կարող են բնակեցում առաջարկել ապաստանի Ձեր հայցը ներկայացրած դեպարտամենտից կամ շրջանից դուրս:**
Եթե Դուք մերժեք այդ առաջարկը, ապա Դուք այլևս ապաստան հայցողի համար նպաստ չեք ստանա և ապաստան հայցողների համար նախատեսած ոչ մի վայրում բնակեցման նոր առաջարկ չի արվի:
Եթե ոչ մի առաջարկ չի արվում, ապա Դուք կարող եք ցանկացած հեռախոսախցիկից ու օրվա բոլոր ժամերին զանգահարել **115՝ այս հեռախոսի համարն անվճար է:** Աելով Ձեր անունն ու Ձեր գտնվելու վայրը, Դուք այդ գիշերվա համար օգնություն ու շտապ բնակեցման մի կենտրոնում գիշերելու հնարավորություն կստանաք: Այդ հեռախոսահամարը սովորաբար զբաղված է: Մի վարանեք նորից համարը հավաքելու համար:
Սակայն, եթե Դուք Մերժեք OFII-ի կողմից բնակեցման վայրը, ապա 115-ը Ձեզ կընդունի միայն այն դեպքում, եթե Դուք առողջական, ֆիզիկական կամ յուրահատուկ սոցիալական տեսակետից վատթարագույն վիճակում եք:

## ■ Մեկնումը բնակության վայրից

Եթե Ձեզ ընդունել են ապաստան հայցողների համար նախատեսած բնակեցման մի վայրում, ապա Դուք դրանից օգտվում եք ապաստանի գործընթացի ողջ ժամանակահատվածում, հակառակ դեպքում, CNDA-ի բողոքարկման ժամանակահատվածը ներառյալ:

Եթե OFPRA-ի ու CNDA-ի վերջնական որոշումը դրական է, ապա Դւք պետք է լքեք կենտրոնը 3 ամսվա ընթացքում, որը կարող է երկարաձգվել մեկ անգամ: Եթե պատասխանը բացասական է, ապա Դուք պետք է լքեք կենտրոնը մեկ ամսվա ընթացքում պարտադիր կերպով:

